ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇԻՒ

372
Տ-30

ԹԻՖԼԻՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿ. ԾԽ. ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

1910—1914

ՔԱՌԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

370
Զ390-Տե

ԹԻՖԼԻԶ
Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7
1914

372
Տ-30
0120-10
370
Զ390-ՏԳ
1004
15901

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇԻՒ

ԹԻՖԼԻՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵՒ. ԾԽ. ԵՐԿՍԵՌ ԹՈՐՈՑԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵՍՆԵՐՈՒ

1910—1914

ՔԱՌԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ. Ա. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ա.
ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
1922
Ереван, Мясникян 49
Ա. ՄՅԱՍՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՁ
Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7
1914

13 AUG 2013

ՋԵԿՈՒՑՈՒՄ
ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1906—1909

1910 թ. փետրուարի 7-ին ս. Սարգիս եկեղ. ծխ. ժողովում ընտրուած Վերաստուգիչ Ցանձնաժողովս՝ պատիւ ունի զեկուցելու նոյն եկեղ. յարգելի ծխականներին՝ իր արած այն դիտողութիւնների մասին, որոնք վերաբերում են նոյն եկեղեցու Հոգաբարձութեան 190⁶/₇, 190⁷/₈ և 190⁸/₉ թ. երի եռամեայ գործունէութեան։

Ցանձնաժողովս, որ կազմուած էր Ստ. Վարդազարեանից, Ար. Ալիխանեանից, Արտ. Դօշոյեանից, Բ. Ամիրաղեանից և Ա. Թարխանեանից՝ ունեցաւ մի շարք ժողովներ՝ նախագահութեամբ Ստ. Վարդազարեանի և քարտուղարութեամբ Յ. Աղաբաբի, որին հրաւիրեց Ցանձնաժողովը։ Բոլոր ժողովներին բացակայեց պ. Բ. Ամիրաղեանը և յանձնաժողովս մնաց չորս անդամով։ Հաշիւների քննութիւնը կատարուել է հետևեալ կերպով։

I.

Դիտողութիւններ Հոգաբ. եռամեայ գործ. վերաբերեալ

Ցարձնաժողովս վերաստուգման գործը կատարել է եռամեակի իւրաքանչիւր տարին զատ-զատ ստուգելով.

Նախ.—Մանրամասնօրէն դիտել է ամեն մի տարին իր ել ու մուտքով. և եկել է այն եզրակացութեան, որ հոգաբարձական տեղեկագրի համեմատութեամբ՝ իրաւ որ ս. Սարգիս եկեղեցին

190⁶/₇ ուս. տ. *ունեցել է՝ 2776 ր. 19 կ. մուտք, իսկ ելք՝ 1895 ր. 15 կ. և առ 1-ն սեպտ. 1907 թ. մնացորդ՝ 881 ր. 4 կոպէկ։*

190⁷/₈ ուս. տ. *եկեղեցին ունեցել է՝ 5008 ր. 27 կ. իսկ ելք՝ 3998 ր. 60 կ. և առ 1-ն սեպ. 1908 թ. մնացորդ՝ 1109 ր. 67*

190⁸/₉ ուս. տ. *եկեղեցին ունեցել է՝ 4484 ր. 47 կ. իսկ ելք, 4362 ր. 40 կ. և առ 1-ն սեպ. 1909 թ. մնացորդ՝ 122 ր. 05 կ.։*

Երկրորդ.—Վերոյիշեալ «Ել ու Մուտքը» մանրամասն քննելուց յետոյ՝ Ցանձնաժողովս գտել է, որ դրանք ցուցակագրուած են ըստ

պատշաճին կանոնաւոր, իւրաքարչիւր մուտք յականէ-անուանէ և իւրաքանչիւր ծախս՝ առաւելապէս խոշորագոյնները՝ յիշատակուած են փաստաթղթերով։ Բացի դրանից՝ մուտքի և ելքի արձանագրութեան ժամանակամիջոցում չկան տարբերութիւններ։

Երրորդ.—Ցանձնաժողովս քննելով մանաւանդ ծախսերի պատճառները՝ գտել է, որ հոգաբարձութիւնն երեք տարուայ ընթացքում չէ կատարել ոչ մի անտեղի ծախս. նա եղել է վերին աստիճանի խնայող և տնտեսող. և

Չորրորդ.—Հոգաբարձութիւնը չը բաւականանալով եկեղեցուց ստանալիք նպաստներով, 190⁷/₈ թուին կազմակերպել է ներկայացում և զբօսանք, որոնցից զուտ արդիւնք ստացուել է՝ 1374 ր. 59 կոպ. մի գումար, որը՝ համարեա թէ հաւասարւում է նախընթաց 190⁶/₇ ուս տ. դպրոցի ամբողջ բիւջէին։

II.

Դիտող. «Մուտքի եւ ելքի» գործադրութեան վերաբերեալ

Ցանձնաժողովս դիտելով եկեղեցու և դպրոցի մուտքի աղբիւրները, որոնք գոյանալիս են եղել՝ մոմավաճառութիւնից, նուիրաբերութիւնից, գանձանակից, ջահերի և թագի վարձից, և այլ աղբիւրներից,—ինչպէս օրինակ ներկայացում-զբօսանքներից.—գտել է, որ այդ բոլորը մտել են եկեղ. հաշուեմատեանների մէջ և այնուհետև ընդհանուր գումարից ժամանակին ծախսուել են դպրոցի և եկեղեցու պէտքերի համար։ Այդ ծախսերն՝ իրենց վերաբերեալ պատճառաբանուած որոշումներով՝ արձանագրուած են համապատասխան մատեաններում, որպիսիք են.

Ա. Արձանագրութեան, բ. Օրագրութեան, գ. Քաղուածքների դ. Դպրոցական ե. Փաստաթղթերի մատեաններ և զ. Ոճակացուցակներ։ Այսպէս ահա, ինչպէս ցոյց են տալիս վերոյիշեալ մատեանները, հոգաբարձութեան պահած հաշիւները եղել են միանգամայն լուրջ հսկողութեան և խնամքի տակ։

III.

Հսկողութեան արդիւնքը

Հոգաբարձութիւնը լուրջ հսկողութեան տակ պահելով եկեղ. մուտքն իր բոլոր աղբիւրներով, երեք տարուայ ընթացքում եկեղ. եկամուտը հետզհետէ աւելացել է.—Օրինակ.

190⁶/₇ ուս. թ. եկեղ. սպառել է՝ 1758 ր. 4 կոպէկի մոմ։ Ուխտաւորներից սենեակների վարձ՝ 87 ր. 90 կ. Մորթուց՝ 79 ր.

190⁷/₈ ուս. թ. եկեղ. սպառել է՝ 2155 ր. 59 կ. մոմ։ Ուխտաւորներից սենեակների վարձ՝ 147 ր. Մորթուց 54 ր. 35 կ.

190⁸/₉ ուս. թ. եկեղ. սպառել է՝ 2229 ր. 10 կ. մոմ, Ուխտաւորներից սենեակների վարձ՝ 191 ր. մորթուց՝ 103 ր. 90 կ.

Այսպէս ահա եթէ համեմատենք իւրաքանչիւր տարուայ յիշեալ երեք տեսակի աղբիւրների մուտքը առանձին-առանձին՝ իսկոյն նկատելի կը լինի, որ ամեն մի ուսումնական տարին՝ անցնող տարուց աւելի արդիւնաւոր է եղել մի քանի հարիւր բուբլով, որը պարզ է վերոյիշեալ աղիւսակից։

IV.

Դիտող. դպրոցի վերաբերեալ

Հոգաբարձութիւնն անխոնջ աշխատանք թափելով դպրոց քանալու վերաբերմամբ, նա, 1906 թուի դեկտեմբերին վերջնականապէս յաջողեցնում է ս. Սարգսի բակում ունենալ մի ծխական դպրոց՝ սկզբում միմեայն մի բաժանմունքով։

Այնուհետև, 3 տարուայ ընթացքում, դպրոցն ունենալով երկերկու բաժանմունք, կարողանում է բաւարար չափով գոհացում տալ Խարբերդի նման յետամնաց մի քաղաքամասի չքաւոր հայութեան վիրախօս զաւակների ուսումնական պահանջներին։ Այդ դպրոցի համար կատարած ծախսերը գործադրուած են շատ տեղին և դպրոցական անհրաժեշտ կարիքներին համապատասխան։ Երանի թէ հոգաբարձութիւնը հնարաւորութիւն ունենար, Խարբերդի հայ ազգաբնակութեան համար բանալու աւելի մեծ դպրոց՝ նոյնիսկ կրկնակի դասարաններով։

V.

Դիտող. նախահաշուի մասին

Ցանձնաժողովս յատուկ քննութեան առաւ 1909/1910 ուսում. տ. դպրոցի նախահաշիւը և գտաւ, որ այդ նախահաշիւը կազմուած է լաւատեսութեամբ։ Դպրոցը պահելու ցանկութեամբ հոգաբարձութիւնը հիմնուել է իր եռանդի վրայ և այդ նախահաշիւը կազմել է պատահական աղիւրների յուսով։ Օրինակ,—ուսման

վարձից, որքան յայտնի է մեզ, Խարփուխի հայ ազգաբնակութեան տնտեսականը, հալիւ թէ դպրոցը ստանայ տարեկան 300 ր. մինչդեռ նշանակուած է նախահաշուի մէջ 500 ր.։ Այդ յօդուածից կը պակասի 200 ր.։ Բացի դրանից՝ անցեալ տարուանից նախահաշուի մէջ մնացորդ է նշանակուած 122 ր. 05 կ. մինչդեռ հոգաբարձութիւնը պարտք ունի Սինօդին տալու 251 ր. 28 կ.։ Այնքի առաջ ունենալով վերոյիշեալ թուաբանական թուերը, յանձնաժողովս գտնում է, որ հոգաբարձութիւնը դեֆիցիտ կունենայ՝ ոչ թէ 322 ր. 95 կ. ինչպէս նշանակուած է նախահաւի մէջ, այլ՝ 652 ր. 88 կ։

Յանձնաժողովս կոչ է անում ս. Սարգսի յարգելի ծխականներին, որ նրանք ի սրտէ աջակցեն հոգաբարձութեանը՝ վերացնելու թէ այս և թէ գալիք տարիների դեֆիցիտը և դպրոցի բարեկարգութեանը չը խնայեն իրենց աջակցութիւնը։

VI.

Ուսման վարձ

Հոգաբարձութիւնն ի նկատի առնելով մեր թաղամասի չքաւոր հայութեան տնտեսականը՝ որոշում է դպրոցը բանալ ձրի, առանց ուսման վարձի, բացի դրանից աշակերտ-աշակերտուհիներին տալիս է դասական պիտոյքներ նոյնպէս ձրի, իսկ չքաւոր սաներին՝ նոյնիսկ հագնելիք։

Յանձնաժողովս ս. Սարգսի հոգաբարձութեան վերոյիշեալ որոշումը գտնում է օրինակելի և միանգամայն նպատակայարմար։ Երեք տարի ուսումը ձրի տալով, չորրորդ տարում, երբ հոգաբարձութիւնը այլևս նիւթական մեծ եկամուտներ չէ ունենում, այլ և՝ աջակցութիւն ծխականների կողմից՝ ստիպուած է լինում ուսման վարձ նշանակել տարեկան 5—8 ր։ Մի վարձ, որ համեմատած մեր միւս ծխ. դպրոցների ուսման վարձերի հետ՝ յանձնաժողովը գտնում է դարձեալ համապատասխան Խարփուխի չքաւոր դասակարգի համար։

VII.

Ամփոփումն

1910 թ. ապրիլի 29-ին, Յանձնաժողովս ունեցաւ իր վերջին նիստը։ Այս նիստին, Յանձնաժողովս 'ի նկատի առնելով մի

շարք ժողովներում արած իր դիտողութիւնները՝ հոգաբարձական եռամեայ գործունէութեան վերաբերեալ, եկաւ հետևեալ եզրակացութեան.—

1.—Ս. Սարգսի դպրոցի հոգաբարձութիւնը՝ յանձին պ. պ. Յ. Աբազեանի, Գ. Անանեանի, Լ. Ղորղանեանի և Յ. Շառաֆեանի, իր եռամեայ գործունէութեան ընթացքում եղել է բարեխիղճ և եռանդուն։

2.—Հաշիւները մաքուր են, ու լրիւ և անհրաժեշտ փաստաթղթերը առձեռն։

3.—Արձանագրութեանց համաձայն՝ ամեն մի գրիչ վճարուած է պաշտօնապէս որոշուելուց յետոյ. և

4.—Եկեղեցու արդիւնքը պահուել է լուրջ հսկողութեան տակ, որից առաջացել են աչքի ընկնող յաջողութիւններ։

Այս բոլորից յետոյ յանձնաժողովս, որպէս ս. Սարգսի եկեղ. ծխականների կողմից ընտրուած մի մարմին՝ խորին շնորհակալութիւն է յայտնում հոգաբարձութեանը նրա եռամեայ գործունէութիւն համար։

Եւ 'ի նկատի առնելով տարուս փետրուարի 7-ին ծխական ժողովի կողմից արտայայտուած վստահութիւնը յանուն Հոգաբարձութեան՝ գտնում է արժանի։

1910 թ. ապրիլի 29-ին,
Թիֆլիս

Նախագահ Յանձնաժողովի՝ Ս. Վարդազարեան

Անդամք Վերստ. Յանձ. { Ա. Ալիխանեան
Ա. Թարխանեան
Ա. Դօշոյեան

Քարտուղար՝ Յ. Աղաբաբ

Վերոյիշեալ զեկուցումը կարդացուեց 1910 թուի մայիսի 30-ի ծխական ժողովում և հաստատուեց ժողովականների կողմից միաձայն։

Նախագահ ծխ. ժողովի՝ Գ. Անանեան

Քարտուղար՝ Ա. Դօշոյեան

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿ. ԾԽ. ԴՊՐ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

ՔԱՌԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1910—1914

I. Հոգաբարձական կազմը.

1910 թ. փետրուարի 7-ին, ս. Սարգիս եկեղ. ծխ. ժողովը քննելով հոգաբարձութեանս անցեալ եռամեայ գործունէութիւնը՝ միաձայն վերընտրեց երկրորդ եռամեակի համար։ Սակայն հոգաբարձութեանս հին կազմից հրաժարելով երկու անդամ՝ ծխական ժողովը նրանց փոխարէն ընտրեց երեցփոխի պաշտօնի համար պ. Ստ. Ա. Վարդազարեանին, իսկ հոգաբարձական՝ Նիկ. Փիրումեանին։ Այսպիսով հոգաբարձութեան կազմը բաղկացաւ պ. պ. Յովսէփ Աբազեանից, Գէորգ Անանեանից, Լևոն Ղորղանեանից և յիշեալ երկու նորընտիր անդամներից, ընդամենը հինգ հոգի։

Այդ կազմը հաստատուեց իր պաշտօնի մէջ մարտ ամսին։ Հին անդամներից պ. Լ. Ղորղանեան պաշտօնավարեց մինչև մայիսի վերջը. սեպտեմբերից նա այլևս չը յաճախեց ժողովների և 1910 թ. սեպտեմբերից սկսած հոգաբարձական կազմը մնաց չորս հոգով։ 1914 թ. փետրուարին վախճանուեց հոգաբարձութեանս նախագահ Նիկ. Փիրումեանը, որով հոգաբարձութիւնս կորցրեց իր եռանդուն և անձնուէր անդամին և իր կազմը մնաց 3 հոգով։ Հաշուետուութեանս ներկայ քառամեակում հոգաբարձութիւնս ունեցել է ընդամենը՝ 114 նիստ։ Այդ նիստերին հոգաբարձութիւնս գլխաւորապէս զբաղուել է նախ՝ ս. Սարգիս եկեղեցու և նրա հետ անմիջական կապ ունեցող զանազան խնդիրներով, երկրորդ՝ նոյն եկեղ. ծխ. դպրոցի և նրա պահպանութեան հետ առընչութիւն ունեցող զանազան հարցերով։

II. Եկեղեցին.

Ս. Սարգիս եկեղեցին համարելով վանք և ուխտատեղի՝ հսկողութեան կողմից պահանջում է կրկնակի ուշադրութիւն։ Դեռ 1906 թ. ից, երբ յիշեալ եկեղեցին վանական կառավարութիւնից անցաւ հոգաբարձութեանս ձեռքը՝ այն օրանից հոգաբարձութիւնս եկեղեցու հսկողութիւնը կենդրոնացրեց իր ամբողջ կազմի մէջ։ Եկեղեցու երեցփոխը լինելով անմիջական հսկող՝ միևնոյն ժամանակ էր նաև մէկը հոգաբարձութեանս անդամներից, որն և կատարում էր բոլոր այն որոշումները, որոնք արւում էին հոգաբարձական ժողովներում։

Եկեղեցու հսկողութեան գործում հոգաբարձութիւնս արել է իր ոյժերը ներածին չափ։ 1) Մշակելով զանազան հրահանգներ՝ կանոնաւորել է եկ. եկամուտի գանձումը։ 2) Առանձնապէս հետևել է ս. Սարգսի տօնին։ 3) Վերանորոգել է եկեղեցու տանիքն ու ներկել։ 4) Վերանորոգել է եկեղ.-դպրոցի շէնքը։ 5) Շինել է կոյուղի։ 6) Վերջին տարում կառուցել է եկեղ. բակի հիւսիսային կողմի երկաթացանց պարիսպը։ 8) Նոր պարիսպ է կառուցել եկեղ. ցած բակի պարտիզի հարաւային կողմը։ 9) Մանր նորոգութիւններ է արել ուխտաւորների բնակարաններում։ 10) Գնել է եկեղեցու համար զանազան անհրաժեշտ իրեր և այլն։

Բացի վերոյիշեալից, իր անդամներ՝ Յ. Աբազեանին և Ն. Փիրումեանին պատգամաւոր է ուղարկել ս. Էջմիածին, որպէսզի առ ժամանակ չը պահանջի Մայր Աթոռին հասանելիք եկեղեցու զուտ արդիւնքի ¼ մասը և անցեալ տարիներից մնացած պարտքը և իրաւունք տրւի աւելի խոշոր վերանորոգութիւնների։ Այդ վերանորոգութիւնը կայանում է նրա մէջ, որ ուխտաւորների սենեակները հետզհետէ հնանում են և պէտք է կարգի բերուեն. մանաւանդ այդ սենեակների առաջը զտնւած պատշգամբը, որ արդէն քանդելու վտանգ է սպառնում։ Այս օրինակ վերանորոգութիւնների համար կարևոր է խոշոր գումար,

որը հոգաբարձութիւնս որոշել է ժողովել եկեղեցու յարգելի ծխականներից և ուխտաւորներից։

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ տ. տ, Գէորգ Ե. Կաթուղիկոսը հաւանութիւն է տուել հոգաբարձութեանս և հաճել է տնօրինել համաձայն հոգաբարձութեան խնդրագրի։ 1913 թուի յուլիսին ս. Սինոդից ստացուել է գրութիւն № 1701, որով յայտնում են թէ՝ Հոգաբարձութեան խնդիրը յարգուել է և անցեալ ապառիկները չեն պահանջուի, այլև՝ այսուհետև՝ երեք տարի չեն պահանջուի Մայր Աթոռին հասանելիք գումարները։ Ցիշեալ բոլոր վերանորոգութիւնների համար՝ հոգաբարձութիւնս մի շարք խորհրդակցութիւններ է ունեցել մասնագէտ ճարտարապետների հետ և կազմել է նախահաշիւներ, մօտ 4000 ր. որոնք կը գործադրուեն գումար ձեռք բերելուն պէս։

Հոգաբարձութիւնս պարտք է համարում խորին շնորհակալութիւն յայտնելու եկեղ. միաբան Եղնիկ քահ. Ալխաղեանին՝ առ այն, որ նա իր ոյժերը ներածին չափ միշտ աջակցել է հոգաբարձութեանս ամեն հարկաւոր գործում։

III. Դպրոց

Ս. Սարգիս եկեղ. ծխականներին յայտնի է, որ 1906 թուից նոյն եկեղեցու դաւթում բացուել է ծխական դպրոց։ Այդ դպրոցի շուրջը հոգաբարձութեանս ունեցած առաջին եռամեակի գործունէութեան մասին՝ իր ժամանակին մանրամասն տեղեկութիւն է տուել ծխական ժողովին, որի մասին իր գրաւոր դիտողութիւնն է արել ծխականներից ընտրուած վերատեսուչ Ցանձնաժողովը։ 1910 թուի մայիսի 30-ին կայացած ծխական ժողովը լսել է այդ դիտողութիւնները և հաստատել։

Գալով ներկայ քառամեակին, հոգաբարձութիւնս պատիւ ունի յայտնելու յարգելի ծխականներին, որ ինքը՝ իր արած աշխատանքների դիմաց՝ եթէ զգացել է մի մխիթարանք՝ այդ նրան պատճառել է իր խնամքի տակ գտնուող ծխական դպրոցի գոյութիւնը, նրա տարեցտարի ունենալիք բարգաւաճումը և այլն։ Չընայելով դպրոցի նիւթական սուղ միջոցներին՝ հոգաբարձութիւնս կանգ չէ առել դպրոցի անհրաժեշտ պէտքերը հոգալու առաջ։ Նա ամեն անգամ ընդառաջ է գնացել Մանկ. խորհրդի որոշումներին և հետզհետէ ձեռք է բերել այն դպրոցական իրերն

ու պիտոյքները, որոնց կարիքը զգացել է դպրոցում։ Օրինակ.—

1.—Գնել է Մանկավարժական պահանջներին համապատասխանող նոր նստարաններ, գրատախտակ, աշխարհագրական, իրազննական և բնագիտական քարտէզներ, պատկերներ, գործիքներ և իրեր։

2.—Զանազան աշակերտական զբօսանքների և էքսկուրսիաների համար՝ միշտ պատրաստ է եղել դրամական օգնութիւն տալու, բացի դրանից.

3.—Վերանորոգելով դպրոցի շէնքը՝ ստեղծել է դասարանների յարմարութիւն։

4.—Ամեն տարի ընդունել է մեծ թիւով ձրիավարժներ, որոնցից շատերին մատակարարել է դասական պիտոյքներ, շատերին տուել է նաև հագուստ և այլն։

Դպրոցի մասին աւելի քան որոշ պատկեր տալու ցանկութեամբ՝ աւելորդ չենք համարում քաղուածօրէն առաջ բերելու աւագ-ուսուցչի ամեն տարի կազմած զեկուցումից հետևեալ գլխաւոր կէտերը։

1. Աշակերտութեան քանակը.

1810—1911 ուս. թ. դպրոցն ունեցել է՝ II և IV բաժ. ուր աշակերտել են՝ 21 աղջիկ, 50 տղայ, ընդամենը՝ 71 հոգի, որոնցից 26 հոգի եղել են ձրիավարժ։ 45 հոգի Խարփուխի, Օրթաճալի և Հրեշտակապետաց եկ. թաղերից։ Փոխադրուում են յաջորդ դասարան 51 հոգի։

1911—1912 ուս. թ. դպրոցն ունեցել է՝ I և III բաժ. ուր աշակերտել են՝ 22 աղջիկ, 68 տղայ, ընդամենը՝ 90 հոգի։ Սրանցից 49 հոգի եղել են ձրիավարժ։ 68 հոգի Խարփուխի, Օրթաճալի և Հրեշտակապետաց եկ. թաղերից։ Փոխադրուել են յաջորդ դասարան 65 հոգի։

1912—1913 ուս. թ. դպրոցն ունեցել է՝ II և IV բաժ. ուր աշակերտել են 18 աղջիկ, 56 տղայ, ընդամենը՝ 74 հոգի։ Սրանցից 35 ձրիավարժ։ 60 հոգի Խարփուխի, Օրթաճալի և Հրեշտակապետաց եկ. թաղերից։ Փոխադրուել են յաջորդ դասարան 48 հոգի։

1913—1914 ուս. թ. դպրոցն ունեցել է՝ I և IV բաժ. ուր

աշակերտել են՝ 23 աղջիկ, 52 տղայ, ընդամենը՝ 75 հոգի։ Սրանցից 25 հոգի եղել են ձրիավարժ։ 50 հոգի՝ Խարփուխի, Օրթաճալի և Ս. Գէորգի եկ. թաղերից։ Փոխադրուել են յաջորդ դասարան՝ 55 հոգի։

2. Ուսուցչական խումբը.

Դպրոցիս Մանկավարժական Խորհուրդը կազմուած է հետեւեալ ուսուցիչ-ուսուցչուհիներից.—

ա.—Աւագ-ուսուցիչ՝ Ց. Բ. Աղաբաբեանց, Ներսիսեանաւարտ, 13 տարուայ փորձառութեամբ։

բ.—Աբ. Յովհաննիսեան (Դանիէլեան), Ճեմարանի I-ին լսարանից, 8 տ. փորձ.։

գ.—Տիկ. Զար. Ցար. Զիլինգարեան, գիմնազիաւարտ, 5 տ. փորձ.։

դ.—Տիկ. Աստ. Վանեան—Աղաբաբ, Երևանի Հայոց թեմական դպրոցի Հայոց լեզուի վկայական. Գայիանեան դըպրոցաւարտ և նկարչական կուրսեր։ 6 տ. փորձառութեամբ։

ե.—Օր. Վ. Բ. Աբաղեան և վերակացուհի.—Թիֆլ. Գայիանեան դպրոցաւարտ և գիմ. 6 դ. 2 տարուայ փորձառութ.

զ.—Միք. Յով. Միրզոյեան.—Ներսիսեանաւարտ և Երաժշտական դպրոց. 7 տարուայ փորձառութեամբ։

Այս տարի հրաւիրուել են նաև Բ. Բերինեանը, Ներսիսեանաւարտ, 8 տարուայ ուսուչ. փորձառութեամբ և բժշկուհի Շուշանիկ Նաթաթեան։

Հաշուետուութեան քառամեակում Մանկավարժական Խորհուրդն ունեցել է 81 նիստ։ Բացի այս նիստերից՝ Մանկ. Խորհուրդն ունեցել է նաև Խառն ժողովներ հոգաբարձութեան կազմի հետ։ Մանկ. Խորհուրդը զբաղուել է դպրոցի ուսման և դաստիարակչական գործի զանազան խնդիրների խորհրդակցութեամբ։ Մանկավարժական Խորհրդի ներկայացուցիչն է եղել դպրոցիս աւագ-ուսուցիչը, որը և՛ հսկել է դպրոցի վրայ և՛ կենդանի կապ պահպանել հոգաբարձական մարմինների հետ։

Աւագ-ուսուցիչը ունենալով շաբաթական 16 դաս, օրական

դասաւանդել է 2—3 դաս։ Ազատ մնացած օրուայ երկու ժամերին նա՝ նախ լսել է պաշտօնակից ուսուցիչ-ուսուցչուհիների դասերը, ապա հսկել է, որ ի կատար ածուեն Մանկավարժ. Խորհրդի որոշումները և երրորդ՝ ընթացք է տուել հոգաբարձութեան այս կամ այն կարգադրութիւններին։

3. Վերահսկողութիւն.

Ինչպէս ասացինք դպրոցիս ուսման անմիջական վերահսկիչն եղել է աւագ ուսուցիչը, որը բացի այն, որ տարուայ ընթացքում առիթ եղած ժամանակ միշտ զեկուցել է հոգաբարձութեանս աչքի ընկնող երևոյթների մասին, այլ և տարուայ վերջը, ամին անգամ, ներկայացրել է դպրոցիս ուսումնական գործի մասին մանրամասն տեղեկագիր։ Հոգաբարձութիւնս ևս յաճախել է դպրոց և շատ անգամ դասեր լսել։ Բացի մեզանից թեմական իշխանութեան կողմից ևս եղել են դպրոցս այցելողներ. ինչպէս օրինակ.—թեմի նախկին կառավարիչ Գերապատիւ Եփրեմ Եպիսկոպոսը, այժմեան թեմական Առաջնորդ Գերապատիւ Մեսրոպ Եպիսկոպոսը և Վրաստանի և Իմերեթի Հայոց ծխական դպրոցների տեսուչ Մեծ. պ. Ց. Տէր-Միրաքեանը։

Պ. Տեսուչն ի պաշտօնէ հնարաւորութիւն է ունեցել անցնող եռամեակում մի քանի անգամ ներկայ լինելու դպրոցիս դասերին։ Լսել է համարեա բոլոր դասարանների դասերը, տեսել է գրաւոր աշխատանքներ, հրաւիրել է Մանկավարժ. Խորհուրդ, յայտնել է իր դիտողութիւնները, որոնք իրենց ամբողջութեամբ շեշտում և ընդգծում են դպրոցիս ուսուցչութեան բարեխիղճ պաշտօնավարութիւնը։ Ի վերջոյ պ. տեսուչն իր դիտողութեան վերջին աւելացնում է հետեւեալ եզրակացութիւնը. «Դպրոցն անցած տարուայ համեմատութեամբ առաջադիմել է»։

4. Դպրոցիս 1913—1914 ուսում. թիւը.

Հոգաբարձութիւնս թեմական տեսչի գրաւոր դիտողութիւններից (1913 թ-ի յունուարին) նախ գոհունակութեամբ տեղեկանում է իր դպրոցի ուսումնական գործի յառաջադիմութեան մասին և երկրորդ իմանում է հետեւեալը.

Թեմական տեսուչը իր տեղեկութիւնների մէջ առաջարկում

էր մեզ՝ ս. Սարգիս եկ. ծխ. դպրոցի հոգաբարձութեան, որ եկող տարեանից (1913—1914 թ.) հարևան թաղամասում գտնվող ս. Գէորգ եկեղ. հոգաբարձութեան հետ համաձայնութեան գալով՝ աշխատել այդ երկու դպրոցներում ծրագրային կապ և դասարանների յաջորդականութիւն ստեղծելով՝ ունենալ զէթ չորսամեայ դասընթացքով մի կանոնաւոր դպրոց. որովհետև երեքուն և կցկտուր դասարանները, որպիսիք պահւում էին մեր ս. Սարգսի և ս. Գէորգի դպրոցներում, ահագին ծախք են կլանում և չեն կարողանում մի որոշ տիպի դպրոց ստեղծել։

Բացի թեմական տեսչից, թեմիս առաջնորդ գերապատիւ Մեսրովբ եպիսկոպոսն էլ այցելելով մեր թաղի երկու դպրոցները, նոյնպէս գտել էր թեմական տեսչի դիտողութիւնը միանգամայն նպատակայարմար, այն նկատումով, որ երկու դպրոցները գտնուելով միմեանց կից թաղերում, հեշտութեամբ կարելի կըլինէր միմեանց յաջորդող դասարաններ պահել։

Պէտք է ասել, որ հոգաբարձութիւնս, նախ քան այս պաշտօնական անձանց յայտնած կարծիքները, տարիներ առաջ համոզուելով, որ մեր թաղամասում անհրաժեշտ է մի կանոնաւոր դպրոց ունենալը՝ դիմել էր ս. Գէորգի հոգաբարձութեան նախկին կազմերից մէկին՝ մեր դպրոցների մէջ ներքին կապ ստեղծելու նպատակով, սակայն ս. Գէորգի դպրոցի այն ժամանակւայ հոգաբարձութիւնը պատասխան չէր տուել իր դիմումին։ Այս 1913 թ-ին, հոգաբարձութիւնս յիշեալ պաշտօնական անձանց կարծիքների համաձայն՝ բանակցութեան մէջ մտնելով ս. Գէորգի հոգաբարձութեան ներկայ կազմի հետ, եկաւ այն եզրակացութեան, որ մեր երկու դպրոցների մէջ ծրագրային կապ և դասարանների յաջորդականութիւն ստեղծելի և մի կանոնաւոր դպրոց պահպանելի երկու կցկտուր դպրոցների փոխարէն։

Յիշեալ բանակցութիւնը կատարւեց 1913 թ-ի յունիսի 23-ին, թեմիս ս. առաջնորդի նախագահութեամբ։ Այդ ժողովը կարծիքների փոխանակութիւնից յետոյ միաձայն որոշեց.

1.—Միացնել յիշեալ երկու դպրոցները միմեանց յաջորդող դասարաններով։

2.—Այդ դպրոցներն առայժմ ունենալու են՝ ա, բ, գ և դ. բաժանմունքներ, որոնցից երկուսը ս. Գէորգի և երկուսը՝ ս. Սարգսի գաւթում։

3.—Դպրոցներն ունենալու են մի ուսուցչական խումբ, մի

աւագ-ուսուցչով, որոնք աւանդելու են երկու դպրոցներում եղած առարկաները։

4.—Իւրաքանչիւր հոգաբարձութիւն հոգում է իր դպրոցի բաժանմունքների ծախքերը, (իբրև առանձին-առանձին եկեղ. հոգաբարձութիւններ), իսկ դպրոցների վերաբերեալ ընդհանուր ծախքերը բաժանում են հաւասար և հոգում են երկու հոգաբարձական կազմերը, (օրինակ՝ աւ. ուս. դպրոցական բժշկի և այլն)։

Ահա այս հիմունքների վրայ հոգաբարձութիւնս այս 1913—1914 ուսում. տ. իր խնամքին յանձնուած դպրոցի և ս. Գէորգի դպրոցի մէջ ներքին կապ է ստեղծել՝ ապագայում աւելի լրիւ տիպի դպրոց ունենալու ցանկութեամբ։ Տարւայ սկզբից, բացի իր ժողովներից, հոգաբարձութիւնս ունեցել է խառն 14 նիստ ս. Գէորգի դպրոցի հոգաբարձութեան հետ, ուր զբաղուել է դպրոցական ընդհանուր բնոյթ ունեցող այլ և այլ խնդիրներով։

5. Ուսումը 1913/1914 ուս. թ.

Աւագ-ուսուցչի կազմած զեկուցագրից քաղուածօրէն առաջ ենք բերում հետևեալ տեղեկութիւնները ուսման գործի մասին։

Դպրոցիս նորեկ աշակերտութեան ընդունելութիւնը տեւել է մինչև սեպ. 7-ը. որից պարզուել է, որ I պատ.—բաժանմունքում աշակերտելու են՝ 42 հոգի, IV պատ. բաժ. 33 հոգի, ընդամենը 75 հոգի։ Սեպ. 7-ին ծխականների և ծնողների ներկայութեամբ կատարւել է դպրոցական մաղթանք։ Սեպ. 8-ից սկսւել է կանոնաւոր ուսումը։ Սեպ. 16-ից անխտիր բոլոր աշակերտութեանը բաժանւել է դասագրքեր, ուսումնական պիտոյքներ և ուսումնական գործը առաջ է տարւել իր կանոնաւոր ընթացքով։

Սեպ. 26-ին և 27-ին դպրոցս է այցելել թեմական տեսուչ Մեծարգոյ պ. Յով. Տէր-Միրաքեանը. երկու օր ներկայ է եղել բոլոր դասերին, արձանագրել է իր դիտողութիւնները և դպրոցի ուսումնական գործը գտնելով իր կանոնաւոր ընթացքի մէջ՝ յայտնել է իր խրախուսանքը։

Ուսումնական գործն իր վերոյիշեալ սկզբնաւորութիւնից յետոյ՝ ամբողջ տարին առաջ է տարւել իր բնական ընթացքով։ Իւրաքանչիւր երկամսեակից յետոյ՝ նախ Մանկավարժական խմբի կողմից թէ բանաւոր և թէ գրաւոր տեղեկութիւններ է տրւել թոյլ աշակերտների ծնողներին՝ հոգալու իրենց զաւակների

պակասութիւնները, ապա՝ կազմակերպուել են ծնողական դասախօսութիւններ յատկապէս ընտանեկան դաստիարակութեան, ուսման առաջադիմութեան շուրջը։ Դաստիարակչական այդ զրոյցները մեծ համակրանքով են ընդունուել ներկայ եղող ծնողների բազմութեան կողմից։

Ուսման գործի յաջողութեանը նպաստել են նախ՝ դպրոցումս ընդունուած պարտադիր ընթերցանութեան սիստեմը, որ առաջ է տարուել շաբաթական 4 դասով (I և IV բ. երկուական դաս) երկրորդ՝ բացօթեայ դասեր, որոնք ըստ հարկին կազմակերպուել են՝ բնագիտութիւնից և հայրենագիտութիւնից։ Երրորդ՝ կրթական նպատակով կազմուած փոքրիկ էքսկուրսիաները, որոնք կատարուել են դէպի քաղաքիս մօտիկ-շրջակայքները։

Ուսման յառաջադիմութեան նպատակով Մանկավարժ. խորհուրդը տարեայ սկզբից ընդունել է ամսական պարտադիր գրաւորների սիստեմը, որը կատարուել է անխտիր բոլոր դասարաններում՝ հայոց, ռուսաց լեզուներից և թուաբանութիւնից ամեն ամիս՝ դասարանական կամ տնային գրաւոր աշխատանքներից դուրս։ Յիշեալ գրաւորների հետևանքները գրի են առնուել Մանկ. խորհրդի արձանագրութիւններում։

Ուսման գործի ղեկավարն եղել է երկու դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիներից կազմուած Մանկ. խորհուրդը, որը մինչև օրս ունեցել է 23 նիստ՝ նուիրուած ուսումնական և դաստիարակչական գործի զանազան խնդիրների խորհրդակցութեան։ Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչն է եղել դպրոցիս աւագ ուսուցիչը, որ անխտիր հսկել է երկու դպրոցների վրայ։

Ուսման գործի յաջողութեանը պակաս զարկ չէ տուել աշակերտների ընթերցանութիւնը։ Տարեայ ընթացքում դպրոցի IV բաժանմունքի աշակերտները՝ նախ յարմարութիւն են ստացել օգտուելու բարեգործական և էժանագին գրադարաններից, երկրորդ՝ դպրոցիս մանկական փոքրիկ գրադարանից։

Տարեայ ընթացքում ուսման գործի յաջողութեանը որոշ չափով խոչընդոտ են հանդիսացել նախ՝ դասարանների թռացիկ լինելը, երկրորդ՝ ս. Սարգիս եկեղ. տօները, երբ 4—5 օրով դասարանները դատարկուում են և ուխտաւորներին վարձով տրուում։

Այս տարի, մինչև օրս դպրոցում եղել է 3 աշակերտական հանդէս, Մի աշակերտական ներկայացում և մի քանի աշակերտական զբօսանք։

Անցեալ տարիներում դպրոցս աւարտող աշակերտ-աշակերտուհիները, որոնք կամեցել են ուսումը շարունակել՝ անարգելք տեղ են գտել Ներսիսեան, Յովհաննեան և Գայիանեան դպրոցներում։ Օրինակ հէնց անցեալ 1912—1913 թ-ին՝ դպրոցիս 14 աշակերտ ընդունուեցին Ներսիսեան դպրոց։

Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R. A Публичная Библиотека
ԱՄԵՆԻԱ, Мясникяна

6. Բժշկական հսկողութիւն

Ներկայ 1913/1914 ուս. տարեայ հոկտեմբերի սկիզբն հոգաբարձութիւնս կարևոր համարեց ունենալ դպրոցական բժիշկ, որ և հրաւիրեց բժշկուհի օր. Շուշանիկ Նաբաթեանին։ Ամբողջ տարին բժիշկն այցելել է դպրոցս մինչև յունուար՝ շաբաթական մի անգամ, յունուարի տօներից յետոյ՝ յաճախ երկու անգամ։

Շաբաթեայ մի օրը նա հսկել է դպրոցիս առողջապահութեան վրայ՝ խնամել է հիւանդ երեխաներին, իսկ շաբաթեայ երկրորդ օրը՝ նա կազմել է աշակերտների առողջութեան statistiկան։ Ի դէպ է յիշել, որ մեր դպրոցը կապակցութեան մէջ լինելով ս. Գէորգի դպրոցի հետ, կարևոր դէպքում, մեր հիւանդները հնարաւորութիւն են ունեցել շաբաթական երկու անգամ խնամուելու բժշկից՝ երբ նա այցելել է ս. Գէորգի դպրոցը։ Նոյնը եղել է և ս. Գէորգի դպրոցի աշակերտութեան համար։ Նրանք էլ կարևոր դէպքում օգտուել են բժշկից երկու անգամ՝ երբ նա այցելել է մեր դպրոցը։

Բժշկի տուած զեկուցագրից երևում է, նախ.—որ այս տարի մեր աշակերտները բժշկութեան 163 կարիք են ունեցել. որից 18 հոգի դեղօրայք են ստացել քաղաքային կենդրոնական բուժարանից ձրի, մնացածներից մեծագոյն մասը դպրոցիս «ապտեչկայից», եղել են նաև այնպիսի աշակերտներ, որոնք հնարաւորութիւն են ունեցել դեղեր գնելու։ Երկրորդ, որ աշակերտութիւնը տառապել է փորացաւով ու fnr հիւանդութեամբ։

Փորացաւը հետևանք է աշակերտութեան վատ սննդի, քաղցածութեան. որի համար բժշկի առաջարկած նախաճաշիկի օգտակարութեան և անհրաժեշտութեան մասին երկու կարծիք չէ կարող լինել. սակայն դպրոցիս միջոցները չեն ներել իրագործել մինչև օրս։ Այսուհետև, հոգաբարձութիւնս, ամեն ջանք գործ է դնելու նախաճաշ տալու համար. չնայելով, որ դպրոցիս աւագ ուսուցչի ջանքերով համարեա ամեն տարի անգդին թուով աշա-

կերտութիւն է ճաշել քաղաքիս ձրի ճաշարաններում։ Այս տարի օրինակ 21 հոգի են ճաշել նոյն ճաշարաններում ձրիապէս։

Որը հետևանք է աշակերտութեան անմաքրութեան, մերկութեան, որի առաջն առնելու համար նախ տեղի են ունեցել Ծնողական Դասախօսութիւններ. երկրորդ՝ ամեն տարի՝ ծննդեան և կամ Զատկի տօներին բաժանուել է չքաւոր աշակերտներին հագնելիք։ Այդ հագուստի կտորեղէնը ձեռք է բերուել Ամերիկեանների առատրական տնից, ուր վճարի ½-ը միշտ նուիրուել է, որի համար հոգաբարձութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը։ (Այս տարի 31 աշակերտի նոր հագուստ է տրուել դպրոցից։) Շնորհակալութիւն է յայտնում նաև բաղնիքների կապալառու պ. Շալամեանցին, որ նա յարգելով հոգաբարձութեանս դիմումը՝ թոյլատրել է դպրոցիս աշակերտութեանը ամսական 30 հոգու ձրիապէս լողանալու իր բաղնիքներում։

7. 1914—1915 Ուս. թի մասին

Հոդաբարձութիւնս եկող 1914—1915 ուսմ. թի մասին անհրաժեշտ որոշումներ անելու մտքով՝ առաջարկեց իր աւագ-ուսուցչին, բացի իր տալիք 1913—1914 ուս. տարեան դպրոցական տեղեկագրից՝ մի զեկուցում ևս տալ երկու դպրոցիս (ս. Սարգսի և ս. Գէորգի դպ.) հոգաբարձութեան միացեալ ժողովին, այն խնդրի վերաբերեալ թէ՝ այս տարի ի՞նչ շահ ունեցաւ ուսումնական գործը յիշեալ դպրոցների միացումից և թէ ի՞նչ շահ է ունենալու աշակերտութիւնն այսուհետև, եթէ շարունակւի դպրոցների միացումը։

— Աւագ-ուսուցիչը յիշեալ խնդիրների առթիւ ներկայացրեց մեզ մի ընդարձակ և պատճառաբանեալ զեկուցում, որից քաղուածօրէն առաջ ենք բերում հետևեալ կէտերը յատկապէս այն հարցի առթիւ թէ՝ միացեալ դպրոցներից աշակերտութիւնը օգուտ ունի, թէ ոչ։

Ա.—Փաստ է, որ մեր ծխական դպրոցներում աշակերտում են չքաւոր դասակարգի երեխաներ, որոնք մեծ մասամբ հնարաւորութիւն չունենալով ուսում շարունակելու աւելի բարձր դպրոցներում,—կեանք են մտնում ուսման տարրական պաշարով։ Ահա մեր միացեալ դպրոցները հնարաւորութիւն են տալիս մեր աշակերտութեանը այսուհետև կեանք մտնել հինգ կամ վեցամեայ կրթութիւն ստանալուց յետոյ, մանաւանդ տղաները, որոնց համար Թիֆլիսում ոչ մի ծխական դպրոց՝ նիւթականի սղութեան պատճառով՝ չունի երրորդից բարձր պատրաստական։

Բ.—Միացեալ դպրոցներում ուսուցիչները հնարաւորութիւն կունենան իրենց սկսած այս կամ այն առարկան աւանդելու մինչև դպրոցի վերջին դասարանը ըստ ծրագրի և մի ամբողջացում տալ աշակերտութեանը, որի արդիւնքն այն կը լինի, որ նախ՝ աւարտող աշակերտը՝ իր կորցրած տարիքի դիմաց կը ստանայ տարրական լրիւ կրթութիւն և երկրորդ՝ որ դպրոցը, իր ծախսած գումարի դիմաց՝ աշակերտութեանը կը տայ իր ծրագրի իսկական պահանջներին համապատասխան կրթութիւն։ Այլապէս՝ զուր կանցնեն թէ աշակերտի աշխատանքը և թէ դպրոցի ծախսած գումարները։

Գ.—Միացեալ դպրոցը հնարաւորութիւն ունենալով պահելու 5—6 տարուայ դասընթացքով մի դպրոց՝ իր միանգամ ընդունած աշակերտին պահում և կրթում է իր յարկի տակ 5—6 տարի շարունակ և այսպիսով ազատում է նրան ամեն տարի այս ու այն դպրոցի դուռը բաղխելուց, երբ շատ անգամ նա բախտ չէ ունենում տեղաւորուելու մի որևէ դպրոցում ու մնում է կամ դիմում է օտար դպրոց։

Դ.—Այսպիսով միացեալ դպրոցիս վերջին դասարանն աւարտող աշակերտը հնարաւորութիւն կունենայ հեշտութեամբ տեղ գտնելու Ներսիսեան դպրոցի II և III դասարանում, աշակերտուհին Յովհաննեան և կամ Գայիանեան դպրոցի նոյն դասարաններում, իսկ ուսումը լրացնել չը ցանկացողները դպրոցը թողնելուց յետոյ իրենց հետ կը տանեն քիչ թէ շատ բաւարար ուսում, որը կեանքի մէջ նրանց կը կարողանայ գոնէ որոշ չափով բաւարարութիւն տալ։

Ե.—Միացեալ դպրոցներն ըստ հարկին ունենալով ուսուցչական մի մեծ խումբ, մանկավարժական նիստերին դպրոցական հարցերը քննւում են աւելի բազմակողմանի կերպով, որն ունի անպայման իր դրական կողմը թէ աշակերտութեան առաջադիմութեան, թէ կրթական գործի օգտակարութեան և թէ առհասարակ ուսման կանոնաւորութեանը վերաբերեալ խնդիրներում։

Զ.—Միացեալ դպրոցներն իրենց մնայուն բաժանմունքներով՝ վստահութիւն են ներշնչում աշակերտ ունեցող ծնողների և կամ ծխականների մէջ՝ իրենց որդուն առաջին պարագայից ծը-

խական դպրոց տալու։ Հակառակ այն սովորութեան, որ կասկածելով թէ այս ծխական դպրոցը՝ այս կամ այն դասարանը չունի, իր որդուն շրջեցնում է այլ և այլ դպրոցներ,—տեղ չը գտնելու դէպքում՝ ճարահատեալ բերում տեղաւորում է ծխակ. դպրոցում։

Ահա այս ու այսպիսի բազմաթիւ փաստեր՝ հոգաբարձութեանս եկան աւելի դրականօրէն համոզելու, որ ամենայն իրաւամբ միացեալ դպրոցներ ունենալը միանգամայն օգտակար է և բղխում է մեր ծխական դպրոցների ծրագրի ոգուց՝ մանաւանդ այնպիսի պարագաներում, երբ՝ մի եկեղեցի հնարաւորութիւն չունի մի կանոնաւոր դպրոց պահելու չորսից—վեցամեայ դասընթացքով։ Մեր այս տարուան կատարած փորձը՝ մեզ աւելի քան համոզեց հոգաբարձութեանս կատարած գործի օգտակարութիւնը՝ միացնելով մեր դպրոցը ս. Գէորգի դպրոցի հետ՝ դասարանների յաջորդական կապով և ծրագրային ամբողջացում ստեղծելով։

Այսօր հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով ծխական դպրոցների վերաբերեալ կանոնադրութիւնը, որով սահմանուած են 4-ամեայ և 6 ամեայ դասընթացքով դպրոցներ, որոշել է ունենալ նախկին տարիների նման երկու բաժանմունք (I և II բ.) սեփական ծախսով. չորրորդ բաժանմունք՝ ½ ծախսով. այն է՝ այդ բաժանման վրայ գործադրելիք գումարի ½-ը հայթայթելու է ինքը, ½-ը ս. Գէորգի եկ. ծխ. հոգաբարձութիւնը, որովհետև այդ դասարան են փոխադրւում ս. Գէորգի դպրոցի III բաժանմունքի աշակերտները՝ թւով երեսուն հոգի։

Փոխ Նախագահ Հոգաբարձ՝ Ստեփան Վարդազարեան

Անդամք Հոգաբարձ. խորհրդի. { Յովսեփ Աբազեան, Գէորգ Անանեան

Աւագ Ուսուցիչ՝ Յ. Աղաբաբ

ՀԱՇԻՒ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ

1910-1914

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

1909 | 1910—1912 | 1913

ՈՒՍ. ՏԱՐ.

ՄՈՒՏՔ — ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մնացորդ Դեկտ. 31-ից 1909 թ.	24	18		
Սենեակների վարձ ուխտաւորներից	215	10		
Գանձանակ	81	72		
Մոմ ամբողջ	2650	82		
Մոմ կիսայրեալ	350	64		
Լուսագին	4	40		
Մորթի	109	95		
Ջահ, թագ և դիազարդ	122	25		
Ցօգուտ ուսումնարանի ստացած գումարներ	336	28		
Ունման վարձ	393	50	4288	84
			4288	84

ՄՈՒՏՔ — ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱ

Ստացել է (եկեղ. ընդհ. եկամուտներից)	1526	32
Փոխարարինաբար տուած գումարից	100	—
	1626	32

ՇԻԻ 1910 Թ. — ԵԼՔ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մոմին	1287	98		
Եկեղեցու սպասաւորներին	575	25		
Եկեղեցու ժամանակաւոր սպասաւորներին	18	10		
Եկեղեցու վերանորոգութեան	127	60		
Ապահովագրութեան	22	55		
Նպաստներ	130	80		
Մանր ծախսեր	133	24		
Հաշիւներ տպագրելու	16	—		
Ծախս Կաթուղիկոսի ընդունելութեան առթիւ	25	—		
Փայտ, նաւթ, ածուխ	45	02		
Գոյք եկեղեցական	11	15		
Ջուր	14	73		
Ս. Սինոդին զուտ արդիւնքի 1/4-ը	125	—		
Ուսումնարանին և հոգ. քարտուղ.	1733	87	4266	29
Մնացորդ առ 1-ն յունուարի 1911 թ.			22	55
			4288	84

ՇԻԻ 1909—1910 ՈՒՍ. Տ. — ԵԼՔ

Ուսուցիչներին ռոճիկ	1445	01
Ուսուցիչներին փոխարինաբար	100	—
Դասակ. պիտոյքներ, տօնածառ և մանր ծախս	81	31
	1626	32

ՄՈՒՏՔ — ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱ

		Ր.	Կ.	Ր.	Կ.
Մնացորդ դեկտ. 31-ից 1910 թ.		22	55		
Սենեակների վարձ ուխտաւորներից		264	80		
Գանձանակ		101	26		
Մոմ ամբողջ		2842	56		
Մոմ կիսայրեալ		425	02		
Լուսագին		12	95		
Մորթի		89	15		
Ջահ, թագ, դիպաստ		120	80		
Ցօգուտ ուսումնարանի ստացած գումարներ		752	34		
Ուսման վարձ		233	70		
% %		13	65		
Փոխարինաբար վերցրած գումարներ՝					
Յովսէփ Աբաղեանից	120 —				
Աւետիս. Զարգարեանից	150 —	270	—	5148	78
				5148	78

ՄՈՒՏՔ — ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱ

	Ր.	Կ.
Ստացել է (եկեղ. ընդհ. եկամուտներից)	2338	49
	2338	49

ՇԻՒ 1911 Թ. — ԵԼՔ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մոմին	1358	77		
Եկ. սպասաւորներին	512	35		
Եկեղ. ժամանակաւոր սպասաւորներին	30	—		
Եկեղեցու վերանորոգութեան	509	66		
Ապահովագրութեան	22	55		
Նպաստներ	160	—		
Եկեղ. մանր ծախսեր	122	27		
Փայտ, նաւթ, ածուխ	44	49		
Գոյք եկեղեցական	4	—		
Ուսումնարանին և հոգ. քարտուղ.	2382	63	5146	72
Մնացորդ առ 1-ն յունարի 1912 թ.			2	06
			5148	78

ՇԻՒ 1910—1911 ՈՒՍ. Տ. — ԵԼՔ

	Ր.	Կ.
Ուսուցիչներին ռոճիկ	1934	92
Դասակ. պիտոյքներ և մանր ծախս	35	12
Նստարաններ	312	—
Ջքաւոր աշակերտ. գրքեր և շոր	26	45
Ուսուցիչներին փոխարինաբար	30	—
	2338	49

ՄՈՒՏՔ — ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մնացորդ դեկտ. 31-ից 1911 թ.	2	06		
Սենեակների վարձ ուխտաւորներից	241	55		
Գանձանակ	71	32		
Մոմ ամբողջ	3136	08		
Մոմ կիսայրեալ	402	21		
Լուսագին	6	05		
Մորթի	92	65		
Ջահ, թագ, դիազարդ	119	80		
Ցօգուտ ուսումնարանի ստացած գումարներ	246	75		
Ցօգուտ ուսումնարանի հանգ. Աղ. Մանթաշեանի կտակով	1000	—		
Ուսման վարձ	163	—	5481	47
			5481	47

ՄՈՒՏՔ — ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱ

	Ր.	Կ.
Ստացել է (եկեղ. ընդհ. եկամուտներից)	2120	97
Փոխար. տուած գումարից	63	75
	2184	72

ԾԻՒ 1912 Թ. — ԵԼՔ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մոմին	1529	71		
Եկեղ. սպասաւորներին	471	15		
Եկեղ. ժամանակաւոր սպասաւորներին	32	90		
Եկեղ. վերանորոգութեան	215	94		
Ապահովագրութեան	22	55		
Նպաստներ	120	—		
Եկեղ. մանր ծախսեր	74	96		
Փայտ, նաւթ, ածուխ	24	79		
Մատեաններ և գործակալին ռոճիկ	30	—		
Գոյք եկեղեցական	63	40		
Ջուր	35	91		
Յայտարարութիւններ	4	50		
Ուսումնարանին և հոգ. քարտուղ.	2276	80		
Թեմական տեսչին	69	—		
Վերադարձրուած է փոխ. վերց. գում.				
Պ. Ա. Զարգարեանին	150	—		
Պ. Յ. Աբազեանին	120	—	5241	61
Մնացորդ առ 1-ն յունուարի 1913 թ.			239	86
			5481	47

ԾԻՒ 1911 – 1912 ՈՒՍ. Տ. — ԵԼՔ

	Ր.	Կ.
Ուսուցիչներին ռոճիկ	1960	—
Դասակ. պիտոյքներ զբօսանքի և մանր ծախս	107	52
Ուսուցիչներին փոխարինաբար	103	75
Ջքաւոր աշակերտ. գրքեր և շոր	13	45
	2184	72

ՄՈՒՏՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱ

	Ր.	կ.	Ր.	կ.
Մնացորդ դեկ. 31-ից 1912 թ.	239	86		
Սենեակների վարձուխտաւորներից	209	80		
Գանձանակ	110	06		
Մոմ ամբողջ	3497	65		
Մոմ կիսայրեալ	495	—		
Լուսագին	13	15		
Մորթի	134	—		
Ջահ, թագ, դիազարդ	147	—		
Ցօգուտ ուսումնարանի ստացած գումարներ	570	50		
Ուսման վարձ	251	50		
% %	22	92	5691	44
			5691	44

ՄՈՒՏՔ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱ

	Ր.	կ.
Ստացեալ է (եկեղ. ընդհ. եկամուտներից)	2445	26
Փոխար. տուած գումարից	70	—
	2515	26

ՇԻՒ 1913 Թ. ԵԼՔ

	Ր.	կ.	Ր.	կ.
Մոմին	1762	50		
Եկ. սպասաւորներին	488	—		
Եկեղ. ժամանակաւոր սպասաւորներին	54	73		
Ռոճիկ գործակալին	20	—		
Եկեղեցու վերանորոգութեան	474	89		
Ապահովագրութեան	22	40		
Նպաստներ	120	—		
Եկեղեցական մանր ծախսեր	149	65		
Փայտ, նաւթ, ածուխ	46	88		
Գոյք եկեղեցական	22	02		
Ջուր	31	52		
Ուսումնարանին և հոգ. քարտուղ.	2453	52	5646	11
Մնացորդ առ 1-ն յունուարի 1914 թ.			45	33
			5691	44

1912–1913 ՈՒՍ. Տ. ԵԼՔ

	Ր.	կ.
Ուսուցիչներին ռոճիկ	2220	—
Ուսուցիչներին փոխարինաբար	160	11
Դասակ. պիտոյքներ և մանր ծախս	63	—
Զքաւոր աշակերտ. գրքեր և շոր	42	—
Էքսկուրսիայի համար	30	15
	2515	26

ԶԵԿՈՒՅՈՒՄ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1910—1913

1914 թւի մայիսի 25-ին Ս. Սարգիս եկեղեցու ծխական ժողովում ընտրւած Վերաստուգիչ Յանձնաժողովս բաղկացած՝ պ. պ. Տէր-Գրիգորեանից, Մ. Սաղաթելեանից, Թ. Ֆրոյեանից և Ա. Դոշոյեանից, ունենալով մի շարք ժողովներ (բոլոր ժողովներին բացակայ էր պ. Ա. Դոշոյեանը) նախագահութեամբ պ. Ա. Տէր-Գրիգորեանի և քարտուղարութեամբ պ. Աղաբաբեանի, որին հրաւիրեց յանձնաժողովս, մանրամասն քննութեան առաւ նոյն եկեղեցու հոգաբարձութեան դպրոցական և եկեղեցական քառամեայ հաշիւներն ու գործունէութիւնը, որի մասին պատիւ ունի զեկուցանելու յարգելի ծխականների հետևեալը։

1. Դիտողութիւններ Հոգաբ. քառամեայ հաշիւների վերաբերեալ.

Յանձնաժողովս ստուգելով յիշեալ քառամեակի առանձին տարիների մուտքն ու ելքը՝ եկել է այն եզրակացութեան, որ Նախ՝— հոգաբարձական տեղեկագրի համեմատութեամբ ս. Սարգիս եկեղեցին ունեցել է։—

1910 թւին՝ 4288 ր. 84 կ. մուտք. իսկ ելք՝ 4266 ր. 29 կ. առ. 1-ն յունւարի 1911 թւի մնացորդ եղել է 22 ր. 55 կ։

1911 թւին՝ 5148 ր. 78 կ. մուտք. իսկ ելք՝ 5146 ր. 72 կ. առ 1-ն յունւարի 1912 թւի մնացորդ եղել է 2 ր. 06 կ։

1912 թւին՝ 5481 ր. 47 կ. մուտք. իսկ ելք՝ 5241 ր. 61 կ. առ 1-ն յունւարի 1913 թւի մնացորդ եղել է 239 ր 86 կ, որից 20 ր. բանկում։

1913 թւին՝ 5691 ր. 44 կ. մուտք, իսկ ելք՝ 5646 ր. 11 կ.

առ 1-ն յունւարի 1914 թւի մնացորդ եղել է 45 ր. 33 կ. որից 37 ր. 92 կ. բանկում։

— Երկրորդ.—*Վերոյշեալ թւերին տեղի ունեցած «ելք ու մուտքը» մանրամասն քննելուց յետոյ՝ Յանձնաժողովս գտել է, որ դրանք ցուցակագրւած են կանոնաւոր, մուտքերը ականէ անւանէ (առաւելապէս նւիրատւի ստորագրութեամբ) և ծախսերը՝ առաւելապէս խոշորագոյնները՝ յիշատակւած են փաստաթղթերով և իւրաքանչիւր տարւանը առանձին-առանձին։ Մուտքի և ելքի արձանագրութեան ժամանակամիջոցում չկան տարբերութիւններ։*

Երրորդ.—*Յանձնաժողովս քննելով մանաւանդ ծախսերի պատճառները, գտել է, որ հոգաբարձութիւնը չորս տարւայ ընթացքում չէ կատարել ոչ մի անտեղի ծախս. նա եղել է վերին աստիճանի խնայող և տնտեսող։*

Չորրորդ.—*Հոգաբարձութիւնը չը բաւականալով եկեղեցուց ստանալիք նպաստներով, կազմակերպել է այդ քառամեակում զանազան զբօսանքներ և ներկայացումներ, որոնց արդիւնքը գործադրել է եկեղեցու և դպրոցի կարիքների վրայ։*

Հինգերորդ.—*Դիտելով եկեղեցու և դպրոցի մուտքի աղբիւրները, որոնք գոյանալիս են եղել՝ մոմավաճառութիւնից, նւիրաբերութիւնից, գանձանակից, ջահերի և թագի վարձից և այլ աղբիւրներից,—ինչպէս օրինակ ներկայացում-զբօսանքներից.— գտել է, որ այդ բոլորը մտել են եկեղ. հաշւեմատեանների մէջ և այնուհետև ընդհանուր գումարից ժամանակին ծախսւել են դպրոցի և եկեղեցու պէտքերի համար։*

Վեցերորդ.—*Յանձնաժողովս գտել է, որ այդ ծախսերն իրենց վերաբերեալ պատճառաբանւած որոշումներով՝ արձանագրւած են համապատասխան մատեաններում, որպիսիք են. ա. Արձանագրութեան, բ. Օրագրութեան, գ. Քաղւածքների, դ. Դպրոցական, ե. Փաստաթղթերի մատեաններ և զ. Ռոճկացուցակներ։*

Եօթերորդ.—*Ինչպէս ցոյց են տալիս վերոյիշեալ մատեանները՝ հոգաբարձութեան պահած հաշիւները քառամեակի ամեն մի տարում եղել են միանգամայն լուրջ հսկողութեան և խնամքի տակ։*

Ութերորդ.—*Դպրոցական հաշիւները 1909/10—1912/13ուսում. թ. համապատասխան են իրականութեան, ծախսերի համար կան փաստաթղթեր, գործադրւած գումարները միանգամայն նպատակալից են և պաշտօնեաների վերաբերմունքը սրտացաւ։*

II. Մի կարեւոր առաջարկ.

Յանձնաժողովս քառամեակի ելքը ստուգելիս՝ տեսաւ, որ Հոգեւոր Բարձր Իշխանութեան կարգադրութեամբ իւրաքանչիւր տարի ս. Սարգսի եկեղեցուց 120 բուբլի նպաստ է տրւում տաճկաստանցի տիկին Փ. Դէմիրճեանին, որ դեռ այս հաշւետւութեան քառամեակում ստացել է 480 բուբլի,—մի գումար, որը անգին կարեւորութիւն ունի դպրոցի բարգաւաճման համար։ Ուստի, Յանձնաժողովս առաջարկում է Մեծարգոյ Ծխական Ժողովին, որ յանձնարարի դպրոցիս Հոգաբարձութեան՝ դիմելու Հոգեւոր իշխանութեանը՝ որ նա այդ նպաստ տալուց ազատ կացուցի ս. Սարգիս եկեղեցին և տիկ. Դեմիրճեանի նպաստը նշանակի այնպիսի եկեղեցուց, որը դպրոց չէ պահում և ազատ է պարբերական զանազան ծախսերից։

Յանձնաժողովս այս առաջարկն անում է այն հանգամանքն ի նկատի ունենալով, որ անհրաժեշտ է դպրոցի աշակերտութեանը (որ մեծ մասամբ բաղկացած է ծայր չքաւորներից) տալ ձրի ուսումն կրթութիւն և որ այդ բանի իրագործման համար տարեկան 120 բուբլին մեծ դեր կարող է խաղալ։ (Ուսման վարձ հաւաքւում է տարեկան 200—250 բուբլի։

III. Եզրակացութիւն.

1914 թւի յունիսի 11-ին Յանձնաժողովս ունեցաւ իր վերջին նիստը։ Այս նիստին, 'ի նկատի ունենալով իր բոլոր դիտողութիւնները՝ Հոգաբարձութեան հաշւետւութեան և գործունէութեան վերաբերիալ, եկաւ հետեւալ եզրակացութեան.—

1.—Ս. Սարգսի դպրոցի Հոգաբարձութիւնը՝ յանձին պ. պ. Ց. Աբազեանի, Գ. Անանեանի և Ստ. Վարդազարեանցի, իր քառամեայ գործունէութեան ընթացքում եղել է բարեխիղճ և եռանդուն։

2.—Արձանագրութեան համաձայն՝ ամէն մի գործ կատարւած է պաշտօնապէս որոշւելուց յետոյ. և

3.—Եկեղեցու արդիւնքը պահւել է լուրջ հսկողութեան տակ, որից առաջացել են յաւելումներ։

Այս բոլորից յետոյ Յանձնաժողովս, որպէս ս. Սարգիս եկեղ.

ծխականների կողմից ընտրւած մի մարմին՝ խորին շնորհակալութիւն է յայտնում Հոգաբարձութեանը նրա քառամեայ արդիւնաւոր գործունէութեան համար։

1914 թ. յունիսի 11-ին.
Թիֆլիս

Նախագահ Յանձնաժողովի՝ Առաքել Տեր-Գրիգորեան

Անդամք Յանձնաժողովի { Մարգար Սաղաթելեանց
Թադեոս Ֆրոյեանց

Քարտուղար՝ Ց. Աղաբաբ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
ԱՄԵՆՐԱ. Мясники на
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՈՒՏՔ — ՆԱԽԱՀԱՇԻՒ ԵԿԵՂԵ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մնացորդ առ 1-ն Յուն. 1914 թ.	45	33		
Մոմից	3800	—		
Սենեակների վարձ	237	—		
Գանձանակ	150	—		
Կիսայրեալ մոմ	500	—		
Լուսագին	50	—		
Մորթի	122	—		
Ջահ, թագ և դիազարդ	140	67		
Յօգուտ ուսումն. ստանալիք գումարներ (ներկայաց. նուէր և զբօսանք)	630	—		
Ուսման վարձ	300	—		
% %	30	—	6000	—
			6000	—

ՄՈՒՏՔ — ՆԱԽԱՀԱՇԻՒ ՈՒՍՈՒՄ

Եկեղեցուց Նպաստ 1914/15 թ.-երին	1880	—
Ուսման վարձ I, II և IV բժ.	300	—
Յօգուտ ուսումն. ստանալիք գումարներ (նուէր, ներկայաց. և զբօսանք)	630	—
	2810	—

ՅՈՒ 1914 Թ. — ԵԼՔ

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Մոմին	1850	—		
Եկեղեցու սպասաւորներին	560	—		
Եկեղ. ժամանակ սպասաւ.	67	—		
Եկեղեցու և դպր. շէնքի վերանորոգ.	350	—		
Ապահովագրութիւն	23	—		
Նպաստներ	120	—		
Եկեղեցու մանր ծախս	180	—		
Գործակալին ռոճիկ	20	—		
Փայտ, նաւթ և ածուխ	80	—		
Եկեղ. գոյք	50	—		
Ջուր և ջրաչափ.	60	—		
Հոգաբարձութ. քարտուղարին	60	—		
Ուսումնարանին	2580	—	6000	—
			6000	—

ՆԱՐԱՆԻ 1914—1915 ՈՒՍ. Տ. — ԵԼՔ

Ուսուցիչներին, աւագ. ուսուցչութեան և վերակացութեան ռոճիկ	2010	—
IV բաժ. ծախսի 1/2-ը	500	—
Թեմական տեսչին	50	—
Բժշկուհուն և դեղօրայք	110	—
Գրադարանին և չք. աշակ. գրքեր	50	—
Մանր ծախս և էքսկուրսիա	90	—
	2810	—

«Ազգային գրադարան»
NL0229834

50. 553